ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին

Հոդված 6. Նախարարությանը ենթակա մարմինը

1. Նախարարությանը ենթակա մարմինը գործում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի շրջանակներում և ապահովում է նախարարության իրավասությանը վերապահված գործունեության ոլորտի առանձին ուղղությունների իրականացումը:

2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝

1) Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը.

2) Քրեակատարողական ծառայությունը.

3) Պրոբացիայի ծառայությունը.

4) Փրկարար ծառայությունը.

5) Միասնական սոցիալական ծառայությունը.

6) Պետական արարողակարգի ծառայությունը.

7) Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը.

8) Ջրային կոմիտեն.

9) ~~Գիտության կոմիտեն~~.

10) Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն.

11) Զբոսաշրջության կոմիտեն.

12) Զինված ուժերի գլխավոր շտաբը.

13) Ռազմարդյունաբերության կոմիտեն.

14) Պետական գույքի կառավարման կոմիտեն.

15) ~~Բարձրագույն որակավորման կոմիտեն.~~

16) Անտառային կոմիտեն.

17) Լեզվի կոմիտեն.

18) ***(կետն ուժը կորցրել է 21.01.22 ՀՕ-5-Ն)***

19) Ոստիկանությունը.~~÷~~

20) Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:

3. Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը:

(6-րդ հոդվածը փոփ. 03.02.21 ՀՕ-71-Ն, 21.01.22 ՀՕ-5-Ն, խմբ., փոփ., լրաց. 16.12.22 ՀՕ-458-Ն)

(21.01.22 ՀՕ-5-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(16.12.22 ՀՕ-458-Ն օրենքն ունի անցումային դրույթ և եզրափակիչ մաս)